ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ***Գեղագիտական դաստիարակությունը գրականության դասավանդման գործընթացում***

Կատարող՝ Արմինե Ազիզյան

Դպրոց՝ Հովհ. Թումանյանի անվան հ. 32 հիմնական դպրոց

Առարկա՝ հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Ի՞նչ է գեղագիտական դաստիարակությունը 5

Գլուխ 2. Գեղագիտական դաստիարակության ձևավորումն ու զարգացումը գրականության դասավանդման գործընթացում 9

Գլուխ 3. Մանկավարժական ախտորոշման տեխնոլոգիան որպես գեղագիտական դաստիարակության արդյունավետ միջոց 17

Եզրակացություն 20

Օգտագործված գրականության ցանկ 21

Ներածություն

Կրթությունը և դաստիարակությունը, որոնք նպաստում են անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, ցանկացած քաղաքակիրթ հասարակության ձևավորման հիմքն են։ Աճող սերնդի դաստիարակությունն իրականացվում է քաղաքական ու տնտեսական բարեփոխումների պայմաններում, որտեղ իր առանցքային դերն ունի սոցիալ-մշակութային միջավայրը։ Քաղաքական և սոցիալ-տնտեսական տեղաշարժերի արդի ժամանակաշրջանում հասարակության մեջ, որին հատուկ են արժեհամակարգի, հասարակական նորմերի շարունակական վերափոխումները, ըստ էության, կարևորվում է մարդու հոգևոր ներաշխարհի զարգացման առաջնահերթությունը։ Ցավոք, այսօր մարդկային համընդհանուր արժեքների պղծումը, շատերի մոտ դառնալով ապրելակերպ, ստեղծել է բարոյական վակուում և աղավաղել է կյանքի գեղագիտական ընկալումը։ Այս պայմաններում լրջագույն խնդիր է դառնում անարատ պահել երեխաների հոգիները, հեռու պահել նրանց կյանքի նկատմամբ սպառողական վերաբերմունքից, դատարկ ժամանցի, կույր ու խուլ տեխնոլոգիաների հետապնդումից։ Սրանք մի մասն են այն անհամար խնդիրների, որոնք ծառացել են ժամանակակից մանկավարժի առջև։ Երեխայի ծնողների հետ մեկտեղ լավ մանկավարժը պիտի դառնա նրա հոգու փրկիչը և բնավորության քանդակագործը։

Մեր երեխաները ապագայի մարդիկ են։ Նրանք պետք է մեծանանան վեհի և գեղեցիկի գիտակցմամբ, ողջ էությամբ ձգտեն դրանց։ Նոր սերնդի մեջ հմտորեն պետք է ներարկել գեղեցիկի օրենքներով ապրելու ցանկություն։ Չէ՞ որ գեղեցիկի զգացում ունեցող մարդը ընդունակ չէ վատ արարքների, դաժանության, անտարբերության։ Ինչպես նշել է Ֆ. Դոստոևսկին, չի կարելի սերնդին ճանապարհ տալ առանց դրականի և գեղեցիկի սաղմերի։ Ահա թե ինչու դպրոցը պետք է օգնի երեխաներին ոչ միայն տիրապետել գիտելիքների, հմտությունների և կարողությունների որոշակի պաշարի, այլև սովորեցնել նրանց ապրել այս աշխարհում, զգալ իրենց գեղագիտական և բարոյական ներգրավվածությունը դրանում։ Ներկայիսծ գլխապտույտ փոփոխություններին հարմարվելու կարողությունը կախված է նրանից, թե աշակերտը որքանով է յուրացրել այն մշակութային ժառանգությունը, որը իրեն փոխանցել են

նախորդ սերունդները։

Հրատապ է գեղագիտական դաստիարակության հիմնախնդիրը ազգային մշակույթի, արժեքների պահպանման և զալիք սերունդներին փոխանցման համատեքստում, և այս խնդրի լուծման պատասխանատվությունը դրվում է սոցիալ-մշակութային միջավայրի առավել կարևոր բաղադրիչների՝ ընտանիքի, դպրոցի, հասարակության վրա։ Այս կառույցները գեղագիտական դաստիարակության միջոցով պետք է կարողանան դաստիարակել այնպիսի սերունդ, որը կլինի հազարամյա հայ մշակույթի և համամարդկային արժեքների կրողը՝ չկորցնելով ազգային ինքնությունն ու ինքնատիպությունը։ Ռուս նշանավոր մանկավարժ և նկարիչ Մ. Նեմենսկին գրում է, որ գեղագիտական դաստիարակության համակարգը նախ և առաջ պետք է լինի միասնական,միավորի բոլոր առարկաները, արտադասարանային պարապմունքները, դպրոցականի հասարակական ողջ կյանքը, որտեղ պարապմունքի յուրաքանչյուր տեսակ գեղագիտական մշակույթի և անձնավորության ձևավորման գործում ունի իր խնդիրը։ Սակայն հավելենք, որ դպրոցում դասավանդվող առարկաներից առաջինը, որն ազդում է անձի բարոյական և գեղագիտական հիմքերի ձևավորման վրա, սերունդներին փոխանցում է մշակույթը՝ որպես համամարդկային արժեքների համակարգ, թույլ է տալիս աշակերտին դիտարկել իրեն որպես մշակույթի սպառող և կերտող, օգնում է ընտրել իր տեղն ու դերը կյանքում, անկասկած գրականության դասընթացն է։ Գրականության ճիշտ կազմակերպված դասընթացները ամենաարդյունավետն են օգնում երեխային կառուցելու աշխարհի ամբողջական պատկերը, ինչը նրան թույլ է տալիս կողմնորոշվել կյանքի տարբեր իրավիճակներում՝ հենվելով արդեն ձևավորված արժեքների վրա։

Գլուխ 1. Ի՞նչ է գեղագիտական դաստիարակությունը

Գեղագիտությունը կամ էսթետիկան (հունարեն aisteticos-զգայությամբ ընկալվող) թեև որպես գիտություն ձևավորվել է 18-րդ դարում գերմանացի փիլիսոփա Գ. Բաումգարտենի կողմից, սակայն որպես իմացության հուզազգացմունքային և գեղեցիկի ճանաչմանն ուղղված ոլորտ գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում: Գեղագիտության զարգացման հիմնական ուղղությունները հստակորեն բացահայտվել են Հին Հունաստանում: Հերակլիտոսը, Դեմոկրիտը, Արիստոտելը միանշանակ պաշտպանում են այն դիրքորոշումը, որ գեղագիտությունը ծագում է առարկաների նյութական հատկություններից: Չափը, համաչափությունը, մասերի ներդաշնակությունը, բազմազանության միասնությունը, ամբողջականությունը մտածողների կողմից համարվում են գեղեցկության օբյեկտիվ կողմեր: Վերածննդի դարաշրջանի ներկայացուցիչներն իրենց գեղագիտական հայացքներում մշակել են իրականության ռեալիստական , մարդասիրական ըմբռնումները: Մարդը մշտապես ունեցել է գեղեցիկի պահանջ, գեղեցիկը կազմել է նրա հոգևոր կյանքի անբաժանելի մասը: Գեղեցկության հանդեպ զգայուն մարդը կարիք է զգում իր կյանքը կառուցել գեղեցկության օրենքներով: Իսկ ի՞նչ է գեղագիտական դաստիարակությունը: Այստեղ բացակայում է միասնական մոտեցումը, և տարբեր հեղինակների կողմից այն բնորոշվում է տարբեր կերպ. Որպես իրականության նկատմամբ մարդու գեղագիտական հարաբերության ձևավորման նպատակաուղղված գործընթաց , որպես շրջակա աշխարհի գեղագիտական ընկալման և գեղեցիկի ստեղծման ունակությունների զարգացում , որպես իրականության նկատմամբ մարդու որոշակի գեղագիտական հարաբերության ձևավորում , որպես անձի հուզազգացմունքային և արժեքային գիտակցության և դրան համապատասխան գործունեության ձևավորման գործընթաց և այլն: Դրանցից միայն մի քանիսը դիտարկելով՝ արդեն կարելի է առանձնացնել հիմնական դրույթները, որոնք խոսում են դրա էության մասին: Նախ, դա նպատակաուղղված ազդեցության գործընթաց է: Երկրորդ, դա արվեստում և կյանքում գեղեցիկը ընկալելու և տեսնելու ունակության ձևավորումն է: Երրորդ, գեղագիտական դաստիարակության խնդիրը գեղագիտական ճաշակի և անհատականության

իդեալների ձևավորումն է: Այսինքն՝ գեղագիտական դաստիարակությունը արթնացնում և զարգացնում է գեղեցկության զգացումը, ազնվացնում է անհատականությունը:

Մի բան հստակ է. գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական արժեքային համակարգ: Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները:

Գեղագիտական դաստիարակությունը իրականացնում է երկու հիմնական գործառույթ. այն ձևավորում է սովորողի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը և զարգացնում նրա գեղագիտական, ստեղծագործական ներուժը: Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է: Այս տեսակետից դաստիարակության գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար: Ընդհանրապես գեղագիտական դաստիարակութունը սերտորեն կապված է , ավելին՝ ինչ-որ իմաստով միահյուսվում է ինչպես բարոյական դաստիարակության, այնպես էլ ինտելեկտուալ զարգացման հետ: Այդ կապերին դեռևս 5-րդ դարում անդրադարձել է փիլիսոփա Եզնիկ Կողբացին, որը գտնում է, որ մարդու ստեղծած գեղեցիկը պետք է ծառայի բարուն: Հայտնվել է նաև տեսակետ, ըստ որի գեղեցիկը ծառայում է որպես բարոյական դաստիարակվածության մակարդակ: Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը:

Գեղագիտական դաստիարակությունը իրականացվում է բոլոր հասակներում: Եվ ինչքան վաղ է մարդը ենթարկվում նպատակաուղղված գեղագիտական ներգործության, այնքան մեծ է դրա արդյունավետ լինելու հավանականությունը, քանի որ մարդու գեղագիտական մշակույթը ձևավորվում է մանկության տարիներին:Դպրոցում են ձևավորվում արվեստի, գրականության, ընդհանրապես գեղեցիկի նկատմամբ այն վերաբերմունքի հիմքերը, որոնց պտուղները մարդը քաղում է իր ողջ կյանքի

ընթացքում:

Ժամանակակից դպրոցի առջև դրված ամենահրատապ խնդիրներից մեկը կրթության և դաստիարակության համատեղումն է մեկ համակարգի մեջ , որը նպաստում է հոգեպես և գաղափարապես զարգացած անհատականության ձևավորմանը: Մեր երկրում կրթության և դաստիարակության ոլորտի էական փոփոխությունները միտված են բարոյական և գեղագիտական համակարգի կատարելագործմանը և կրթության ոլորտի հետ դրա սերտ փոխազդեցությանը: Այս առումով կրթությունը ձեռք է բերում մարդասիրական և գեղագիտական ուղղվածություն : Անվիճելի է, որ գեղագիտական դաստիարակության բաղադրիչ է գեղարվեստական կրթությունը: Կրթության բովանդակության մեջ ներառված են մի շարք դասընթացներ՝ կերպարվեստ, երաժշտություն, գրականություն, հասարակագիտություն, որոնք նպաստում են գեղարվեստական պատկերացումների, գեղագիտական ճաշակի, գիտելիքների համակարգի ձևավորմանը, գրեթե բոլոր ուսումնական առարկաներն ունեն երեխաների գեղագիտական դաստիարակության լայն հնարավորություններ: Հանրակրթության պետական չափորոշչում ուսումնական բնագավառների շրջանակներում նկարագրված են սովորողների գեղագիտական դաստիարակության և կարողունակությունների ձևավորմանն ուղղված պահանջներ: «Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառը միտված է գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության միջոցով անձի մտավոր և ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, իրականացվում է միջառարկայական կապերի ակտիվ ներգրավմամբ՝ արվեստի և ժողովրդական արհեստների տարբեր տեսակներին հաղորդակցվելու, ինքնուրույն գեղարվեստական-ստեղծագործական գործունեություն ծավալելու միջոցով: Այդ ուսումնական բնագավառը նպաստում է սովորողի ինքնաճանաչմանը և ինքնարտահայտմանը, ազատ անհատականության կայացմանը, մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, քննադատական, վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, վարպետության, ստեղծարարության, կատարողական առանձնահատկությունների զարգացմանը: Միտված է նաև գեղագիտական ճաշակը և ստեղծագործական միտքը կենցաղային խնդիրներին և գործունեությանը կապելուն, ավանդական և այսօր արդեն գրեթե կորսված՝ բազմաթիվ ժողովրդական

ավանդույթներին և մշակութային ժառանգությանը հաղորդակցվելուն։ Սակայն կրթության նկատմամբ պետական մոտեցման փոփոխությունները առաջին հերթին ազդում են հումանիտար գիտությունների վրա, քանզի դրանք անմիջականորեն ներգործում են և՛ հոգու, և՛ մտքի վրա, հետևաբար մարդու՝ որպես անհատականության ձևավորման վրա։ Ժամանակակից դպրոցը կարող է և պետք է նպաստի հասարակության նորացման գործընթացին։ Արդի կրթական համակարգի կենտրոնում անհատականությունն է, աշխարհի ամբողջական պատկերը, աշխարհը հասկանալու նրա ցանկությունը՝ որպես նախորդ սերունդների փորձ։

Գլուխ 2. Գեղագիտական դաստիարակության ձևավորումն ու զարգացումը գրականության դասավանդման գործընթացում

Հայեցի սերունդ կերտելու գործում հայ գրականությունը առաջատար առարկա է,եթե ոչ ամենաառաջատարը: Հետևաբար այս առարկայի դերը հատուկ է և անփոխարինելի: Գրականությունը՝ որպես դասընթաց ոչ ինքնանպատակ ուսումնասիրելը, վեհի, գեղեցիկի, համամարդկային գաղափարների ներարկումը երեխաների հոգում հաստատուն «իմունիտետ» են առաջացնում և նրանց զերծ են պահում ամեն տեսակ վտանգավոր ներգործություններից, որոնք տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման մեր դարաշրջանում էլ ավելի ազդեցիկ են և շատ անգամ, ցավոք, անվերահսկելի: Այսօրվա հանրային մթնոլորտում, երբ ռոմանտիզմն այլևս «նորաձև» չէ, երբ նկատվում է բարության, վեհանձնության պակաս, նյութականին և անցողիկին բարձրից նայելու, մնայունին և հավերժին ձգտելու անկրկնելի կարողությունը առաջին հերթին կարող է տալ գրականության դասընթացը: Անձի հոգևոր և բարոյական վերածնունդը խնդիր է, որից կախված է մեր երկրի ապագան, իսկ երկրի ապագան որոշվում է դպրոցական սեղանի շուրջ: Դպրոցը պետք է օգնի երեխաների ոչ միայն տիրապետել գիտելիքների հմտությունների և կարողությունների որոշակի պաշարի, այլև սովորեցնել նրանց ապրել այս աշխարհում, զգալ իրենց գեղագիտական և բարոյական ներգրավվածությունը դրանում: Հետևաբար գրականության և արվեստի դերը մարդկության հոգևոր փորձի փոխանցման գործում էլ ավելի մեծացել է ՝ նպաստելով սերունդների միջև կապերի վերականգնմանը: Գրականությունը՝ որպես արվեստ, արտահայտում է մարդկանց հոգևոր ավանդույթները, երիտասարդ սերնդի համար գործում է որպես մի տեսակ պաշտպանություն բռնության, դաժանության, ազգայնականության գաղափարների տարածումից, որը մեծ վնասներ է հասցնում հասարակությանը, առաջին հերթին մատաղ սերնդին:

Գրականության ուսումնասիրությունը առավել արդյունավետ և շոշափելի դարձնող միջոցներից է վերջինս արվեստի այլ տեսակների՝ երաժշտության, կերպարվեստի, կինոյի և թատրոնի հետ մշտապես համադրելը: Իսկ գրականության ուսուցչի խնդիրն է օգնել աշակերտներին գիտակցել արվեստի զարգացման ներքին

տրամաբանությունը։ Հայտնի փաստ է, որ հուզական ներգործությունը շատ ավելի անջնջելի տպավորություն է թողնում սովորողների վրա, քան տրամաբանական մեկնաբանությունը։ Ուստի դասավանդման ընթացքում չպետք է անտեսել աշակերտների հոգևոր հարստացման և գեղագիտական դաստիարակության այնպիսի հզոր աղբյուրներ, ինչպիսիք են երաժշտության ունկնդրումը կամ համապատասխան կտավի վերլուծությունը։ Հայտնի նկարչի կտավը կամ երաժշտական ստեղծագործության մի պատառիկը, որ հնչում է դասի ընքացքում, ասես ակամայից բարձրացնում, ոգեշնչում են երեխաներին, նպաստում խոսքի մշակույթի խթանմանը՝ հող նախապատրաստելով գեղագիտական իդեալի նորանոր շերտերի համար։ Արվեստի գործերը լայն ու բազմակողմանի ազդեցություն ունեն մարդու վրա։ Բոլոր ստեղծագործ ուժերը ներառված են հոգևոր գործընթացում՝ զգացմունքներ, երևակայություն, ինտելեկտ, հիշողություն և այլն։ Արվեստն ընկալելիս մարդը գտնվում է հոգևոր ինտենսիվ գործունեության վիճակում, որին մասնակցում են անձի գրեթե բոլոր մտավոր գործընթացները՝ մտածողություն, ընկալում, կամք, զգացում, երևակայություն, հույզեր, ներքին խոսք։ Հուզականորեն ներգործելով սովորողների ներաշխարհի վրա՝ գեղանկարչական աշխատանքը, երաժշտական ստեղծագործությունը երկար ժամանակ մնում են հիշողության մեջ՝ դրանով իսկ նպաստելով հոգեբանորեն և սոցիալապես նոր անձնավորության ձևավորմանը։

Ուսուցիչը գրականության դասերի ընթացքում պետք է ընտրի կերպարվեստի այնպիսի աշխատանքներ, որոնք թույլ են տալիս ակտիվացնել աշակերտների բանավոր խոսքը, ինչպես նաև զարգացնել նրա գեղագիտական ճաշակը։ Շոպենի անկրկնելի գիշերերգերի նվագակցությամբ ուսումնասիրելով Վան Գոգի «Աստղազարդ գիշերը» կտավը՝ աշակերտը երբեք չի մոռանա Միսաք Մեծարենցի «Սիրերգը»։ Մոցարտի «Ավե Մարիայի» ունկնդրումը, վերածննդի դարաշրջանի արվեստագետների կերտած Աստվածամոր նկարների ու քանդակների ուսումնասիրությունը նոր դասի մատուցման խթանման փուլում անփոխարինելի նյութեր են Նարեկացու «Մեղեդի ծննդյան» տաղը կամ Շիրազի մայրերգությունն անցնելիս։ Անհնար է պատկերացնել Տերյանի աշնանային պոեզիան առանց գույների և հնչյունների ներդաշնակության։ Պետք է ընտրել արվեստի այնպիսի գործեր, որոնք կակտիվացնեն աշակերտների երևակայությունը, կնպաստեն նրանց գեղարվեստական ճաշակի զարգացմանը։

Գրական ստեղծագործություններն ուսումնասիրելիս արվեստի մյուս ճյուղերին դիմելը շատ անգամ կարող է հրաշքներ գործել: Առաջին հայացքից ձանձրալի թվացող, ժամանակակից ընթերցողի համար անհետաքրքիր ստեղծագործությունը աշակերտի կողմից սկսում է այլ կերպ ընկալվել և աստիճանաբար գրավիչ ու ձգող դառնալ: Հայտնի փաստ է, որ գրական ստեղծագործության մոտիվներով բեմադրված պիեսը կամ նկարահանված ֆիլմը երբեմն ավելի գրավիչ ու ցանկալի են և՛ ընթերցասեր, և՛ առավել ևս կարդալուց խուսափող, ծուլացող աշակերտների համար: Հմուտ ուսուցիչը, ֆիլմը կամ թատերական բեմադրությունը իբրև խայծ օգտագործելով, աննկատ կերպով աշակերտին ուղղորդում է դեպի գիրքը՝ ընթերցասերների իր բանակը համալրելով նոր աշակերտներով: Չէ՞ որ գրքի հետ շփումը կյանքի հետ շփումն է: Այս ամենին զուգահեռ զգալիորեն ընդլայնվում են սովորողների ճանաչողական և գեղագիտական հորիզոնները, հարստանում է նրանց ներաշխարհը: Օրինակներն անհամար են, դրանք ակամայից բարձրացնում, ոգեշնչում են աշակերտներին, մղում ստեղծագործական փնտրտուքների: Իհարկե, այս ամենը պահանջում է երկարատև և մտածված նախապատրաստական աշխատանք, բայց դրա հնարավորությունը լայնորեն ընձեռված է ներկայիս տեխնոլոգիաների հասանելիությամբ: Նմանատիպ դասերի վերջնական նպատակը զգայուն, առողջ ճաշակով, ստեղծագործ մտքով և խորը գիտելիքներով, բազմակողմանի զարգացած անհատ ձևավորելն է:

Գրականության դասերի ընթացքում արվեստի տարբեր ճյուղերի համադրումը կարող է օգտագործվել երեք ուղղություններով.

- արվեստի այլ տեսակների ընդգրկումը ստեղծագործության հեղինակի մասին գիտելիքները խորացնելու, հետագա ուսումնասիրության համար հուզական ֆոն ստեղծելու համար
- արվեստի ստեղծագործությունների պատմական, գաղափարական կապի որոշումը ընտրած թեմայի մեջ առավել խորանալու համար
- արվեստի տարբեր տեսակների օգտագործման բացահայտումը գրողի կողմից:

Գրականության մեջ արվեստի այլ ճյուղերի ընդգրկումը ունի նաև գործնական նպատակներ. այն օգնում է առավել դյուրին կերպով ընկալել և վերաիմաստավորել

փիլիսոփայական և հոգեբանական բարդ ստեղծագործությունները և զգալիորեն ընդլայնել սովորողների ճանաչողական հորիզոնները: Գոյություն ունի մարդու բարոյական կերպարի վրա գեղագիտական ազդեցության մի հատուկ տեսակ, որն անվանում են մաքրագործում (կատարսիս): Հույն նշանավոր փիլիսոփա Արիստոտելը մաքրագործումը հատկապես կապում էր ողբերգականի հետ: Դիտելով ճակատագրով հալածված մարդկանց տառապանքները՝ հանդիսատեսը ցավակցության զգացումով է լցվում դեպի տառապյալը, իսկ դա նրան դարձնում է վերին աստիճանի մարդկային, մաքրագործում է նրա հոգին, դարձնում է բարի: Բարությունը բարոյական համապարփակ կատեգորիա է, որն իր դրսևորումն է գտնում կարեկցանքի և ողորմության, խղճահարության մեջ: Հայ ժողովրդի՝ դարավոր ցավերից կարծրացած հոգու համար ամենաբնորոշ գիծը, այնուամենայնիվ, եղել և մնում է խղճահարությունը: Դրա բազմաթիվ ապացույցներից են Զոհրապի նորավեպերը: Մեծ իրապաշտն իր «Կյանքը ինչպես որ է» կարգախոսով կարեկցանքի ու խղճահարության կայծեր է վառում՝ ընթերցողի հոգում արթնացնելով նորանոր «Խղճմտանքի ձայներ» և «Լուռ ցավեր»: Եվ եթե մի քանի դասի ընթացքում ուսուցչին հաջողվում է այս ամենի գոնե մի մասը փոխանցել աշակերտներին, ապա նա կարող է իրականացված համարել իր առջև դրված բարոյական և գեղագիտական դաստիարակության նպատակների մի մասը:

Հայ գրականությունն իր ազգային և համամարդկային բովանդակությամբ առավել քան ողբերգական է: Ուստի չպետք է խուսափել մատաղ սերնդին մարդկային կյանքի անարդար և տխուր էջերն անթաքույց ցուցադրելուց: Դրանից նրանք ոչ թե հուսալքվում են, այլ խղճահարությամբ են տոգորվում՝ մաքրագործվելով կարեկցանքի և ապրումակցման զգացմունքների ներգործությամբ: Խիղճը մարդու բարոյական ինքնագնահատականն է: Խղճի ձայնին լսելու ունակությունը մարդու բարոյական բարձր էության նշան է: Խղճի խայթի պատկերները քիչ չեն հայ դասականների երկերում: Հաճի աղան Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքում խղճի դատարանով անցնում է ապաշխարության: Գրականության ուսուցիչը այս երկի ուսումնասիրության առանցքում պիտի դնի տառապանքի մաքրող ուժի, ապաշխարությանը նախորդող խղճի փրկարար տանջանքների գաղափարը: Կարելի է ասել, որ հայ գրականության արժեքների հիերարխիայում խիղճը ամենաբարձր դիրքն է զբաղեցնում: Այն բնորոշ է

մեր բոլոր դրական հերոսներին։ Խիղճը՝ որպես մարդասիրության ակունք, մեր դյուցազներգության հերոսների ամենաբնորոշ հատկանիշներից է։ Հիշենք Ֆրեդերիկ Ֆեյդիի՝ մեր էպոսին տրված ամենահատկանշական բնորոշումը. «Այնտեղ չկա մարդակերություն, այլ կա մարդասիրություն»։ Մեր էպոսն ուսումնասիրելիս հենց այս բնորոշմամբ կարելի է ներկայացնել մեր ժողովրդի հոգեկերտվածքը։ Ապացուցված փաստ է, որ ամեն էպոս իր ժողովրդի էության և հոգեկերտվածքի դարավոր արձագանքն է։ Հայը խղճահարության ու կարեկցանքի մարմնացում է, քանզի տառապել է և գիտի տառապանքի գինը։

Անձնազոհության, արժանավայել կյանքի անկրկնելի օրինակներ են ոչ միայն գեղարվեստական կերպարները, այլև նրանց հեղինակները՝ մեր գրականության և պատմության մեծագույն տառապյալները. Չարենցի, Բակունցի, Մահարու կենսագրություններն ուսումնասիրելիս ուսուցիչը պարտավոր է ոչ այնքան կանգ առնել երբեք չմտապահվող թվերի և փաստերի վրա, այլ նրանց կյանքի ու պայքարի օրինակով վեհի և վսեմի գաղափարներիով տոգորել սովորողներին։

Գեղարվեստական գրականությունը առաջին հերթին գեղագիտական իդեալի կրողն է։ Իդեալն է սահմանում այն արժեքների սանդղակը, որին մենք ձգտում ենք։ Գեղագիտական իդեալի խնդրի նկատմամբ հետաքրքրությունը գալիս է դարերի խորքից և այսօր էլ չի կորցնում իր արդիականությունը, ընդհակառակը՝ նրա նկատմամբ հետաքրքրությունը օրեցօր ավելի ու ավելի է մեծանում։

Անասելի գրավիչ ու հետաքրքիր է մեր մեծերի՝ իդեալի փնտրտուքը հայ գրականության բազմամյա ձևավորման ընթացքում։ Սայաթ-Նովան փնտրում էր իդեալը և գտավ իր սիրած կնոջ կերպարում, Նալբանդյանը՝ ազատության որոնումներում, Վարուժանը՝ հեթանոսական անցյալում, Մեծարենցը՝ գյուղական հովվերգության մեջ, Հովհաննես Թումանյանը՝ տիեզերքում և ամենուր։ Հանճարների այս որոնումներին համաքայլ հետևելով՝ ուսուցիչն իր սաների հետ կարող է անսպասելի բացահայտումներ անել և անգամ իդեալի նոր սահմանումներ ձևակերպել։ Կատարյալ գեղեցկության գաղափարը մարդու և հասարակության գիտակցված գեղագիտական պահանջմունքն է։ Գեղագիտական իդեալը զարգանում է որոշակի պատմական պայմաններում հասարակության պատմական փորձի հիման վրա և պարբերաբար փոխվում է հասարակության զարգացմանը զուգընթաց։ Աշակերտների

մեջ գեղագիտական իդեալի ձևավորումը՝ որպես գեղագիտական գնահատման բարձրագույն չափանիշ և գեղագիտական գործունեության ամենակարևոր կարգավորիչ, գեղագիտական դաստիարակության գլխավոր նպատակն է։ Աշակերտների մոտ գեղագիտական իդեալի ձևավորման գործընթացը բարդ է և հակասական։ Այն բարդանում է նրանով, որ նրա վրա ազդում են աշակերտի անհատական բնութագրերը՝ հուզական ոլորտի առանձնահատկությունները, գեղարվեստական մտածողության բնույթը, խելքը, բնավորությունը, գիտելիքների մակարդակը, ընդհանուր զարգացումը, կենսափորձը և այլն։ Որպեսզի գրականության դասերին աշակերտների գեղագիտական իդեալի ձևավորումը ճիշտ ուղով ընթանա, անհրաժեշտ է գրական ստեղծագործության ամբողջական ընկալում ապահովել։ Հենց դա կարող է գեղագիտական լիակատար հաճույք պատճառել, նպաստել գեղեցիկի և վեհի մասին գեղագիտական պատկերացումների ձևավորմանը։ Գրական ստեղծագործության ամբողջական ընկալումը կախված է նախապես ծրագրված աշխատանքի գեղագիտական պլանից։ Վերջինս հնարավորություն է տալիս նկատել և ըմբռնել գրականության և իրականության բարդ կապերը և փոխազդեցությունները։

Շատ կարևոր է գեղարվեստական երկի ուսումնասիրության ընթացքում ուշադիր և աննկատ հետևել աշակերտների գեղագիտական արձագանքին։ Դա օգնում է հասկանալ և վերահսկել նրանց գեղագիտական ձևավորման գործընթացը։ Վերջինս, որպես կանոն, միշտ զգացմունքային է։ Այն իր մեջ ներառում է կարեկցանքի պահ, ապրումակցում, կերպարների և հեղինակի զգացմունքների փոխանցում ընթերցող երեխաներին։ Աննկատելիորեն կազմավորվում է աշակերտի գեղագիտական փորձը՝ որպես արվեստի ստեղծագործության անմիջական ազդեցության արդյունք։

Զգացմունքայնությունը չափազանց կարևոր է արվեստի ցանկացած գործի ծանոթանալիս։ Առավել ևս, երբ խոսքը վերաբերում է այն ստեղծագործություններին, որոնցում հեղինակի սուբյեկտիվությունն այնքան զգալի է, որ առանց դրա զգացողության անհնար է հասկանալ ո՛չ գրական երկը, ո՛չ իրեն՝ հեղինակին։ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ուսումնասիրությունը աննպատակ և թերի կլինի, եթե ուսուցչի ուղղորդմամբ աշակերտները հեղինակին ևս չդիտարկեն որպես իր երկի գլխավոր կերպարներից մեկը։ Միայն այդ մոտեցմամբ նրանց համար հասանելի կդառնան մեծ հայրենասերի՝ Հայաստանի վերքի երգչի հուզական անչափելի ներաշխարհը, նրա հոգու անսահման խորքը և անմնացորդ նվիրվածությունը իր

որբացած հայրենիքին։ Այսպիսի մոտեցման դեպքում միայն խորը հուզական արձագանքման, հեղինակի զգացմունքների աշխարհ թափանցելու միջոցով է հնարավոր դառնում ընկալել Անմահ քանաքեռցու մեծությունը։

Գեղեցիկը հիմնական գեղագիտական կատեգորիաներից է, որը կիրառելի է ամենաբարձր գեղագիտական արժեք ունեցող երևույթների նկատմամբ և բնութագրում է իրականության մեջ և արվեստում դրսևորվող գեղագիտական բարձրագույն գաղափարները։ Գրականության մեջ գեղեցիկը գեղարվեստական արժեք է, որն արտահայտում է մարդասիրական իդեալներն ու հոգևոր հարստությունը գրական ստեղծագործության մեջ։ Անհերքելի փաստ է, որ հայ գրականության մեջ գեղեցիկի կատեգորիան իր բոլոր նրբերանգներով մարմնավորված է մթնաձորյան աշխարհում։ Ակսել Բակունցը գեղարվեստական կատարյալ ձևի մեջ հայտնաբերել է այնպիսի գեղեցկություններ, որոնց շնորհիվ բնանկարը, միանալով հեղինակային նրբին զգացումին, հաճախ դարձել է մարդկային լուռ ողբերգությունների արտահայտություն ։ Եվ գրողն ամեն անգամ խորապես տագնապել է, երբ վտանգվել են գեղեցկությունն ու բարոյական արժեքը։ Նրա նուրբ ու քնարական պատմվածքներում գեղեցիկի ըմբռնումը իրականության և գեղեցիկի փոխհարաբերության տեսանկյունից բազմակողմանի ընդգրկում ունի։ Բակունցի բոլոր պատմվածքները գեղագիտության <<դասագրքեր են>>, որոնց ճշգրիտ ու նպատակաուղղված մատուցմամբ աշակերտների մեջ միայն գեղեցիկի օրենքներով ապրելու ցանկություն կներարկվի։

Վեհը գեղագիտական կատեգորիա է, որը բնութագրում է առարկաների և երևույթների ներքին նշանակալիությունը, երբ այդ առարկաների ու երևույթների իդեալական բովանդակությունն անհամեմատելի է նրանց արտահայտման իրական ձևերի հետ։ Վեհը հարկադրում է մարդուն գիտակցել իր վերջավոր և սահմանափակ լինելը, բայց միաժամանակ վեհացնում է որպես հոգևոր էակի, արթնացնում է բանականության գաղափարներ և բարոյական գերազանցության գիտակցություն անգամ իրեն ճնշող բնության նկատմամբ։ Վեհը սերտորեն կապված է հերոսականության, մարդու, ժողովրդի պայքարի ու ստեղծագործական գործունեության պաթոսի հետ։ Վեհն անբաժանելի է մարդու վսեմության և արժանապատվության գաղափարից։ Վեհի ըմբռնումը հիանալի կերպով ամբողջացնում է Պարույր Սևակը իր <<Վարք մեծաց>> բանաստեղծության մեջ, երբ խոսում է մտքի թռիչքով ժամանակից առաջ ընկած , նոր օրենք ու կարգ

սահմանած և նսեմ իշխանավորների կողմից օրենքից դուրս հայտարարված վեհ ու վսեմ անհատների մասին ։

Վեհը և գեղեցիկը անմիջականորեն փոխկապակցված են անձնազոհության և հայրենասիրության հետ։ Մեր գրականությունը հարուստ է հայրենասիրության հրաշալի դասերով՝ Խորենացուց մինչև Հրանտ Մաթևոսյան։

Մարդկանց բարոյական գիտակցության հիմքում իր անփոխարինելի տեղն ունի հայրենիքի գաղափարը։ Դա պայմանավորված է զինված ոտնձգություններից նրանց հողի պաշտպանվածության զգացողությամբ։ Բոլոր հերոսապատումներում թշնամուն հակառակվող մարդկանց միասնությունը հաղթանակի գրավականն է։ Իսկ ընթերցողի բարոյական իդեալը մարմնավորող հերոսը անձնազոհ ռազմիկն է՝ հայրենիքի համար իր կյանքը չխնայող։ Անձնազոհ քաջության օրինակները մեր ժողովրդի կյանքում անհամար են, մինչդեռ սակավ են միասնականության դեպքերը։ Հայրենասիրական դաստիարակության գործընթացում պետք է հայ երեխայի գիտակցության մեջ ամրակայել առաջին հերթին միասնական լինելու, թշնամու դեմ մեկ բռունցք դառնալու գաղափարը։ Ազատ հայրենիքի գրավականը միասնական ժողովուրդն է։ Մեր ազատության կարգախոսը եղել և մնալու է չարենցյան պատգամը. <<Իմ հա՛յ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո միասնական ուժի մեջ է>>։

Հայ ժողովրդի կյանքում մշակույթը առանձնակի դեր է ունեցել ոչ միայն ընդհանուր քաղաքակրթական մակարդակի, այլև ազգապահպանման առումով։ Իմաստնություն և խրատ ճանաչելու, հանճարների խոսքին անսալու պատգամը՝ որպես մեր ազգի կարգախոս, Ոսկեդարից մինչև մեր օրերը կանխորոշել է նաև ապագա սերունդների ուղին։ Այս անհերքելի ճշմարտությունը հայ աշակերտի գիտակցության մեջ ամրագրելու առաքելությունը իրականացնողը, իհարկե, հայ գրականության ուսուցիչն է։ Մեր ժողովուրդը համաշխարհային հարուստ մշակույթի մի մասնիկն է, նրա գեղագիտության կրողը և ձևավորողը։ Մենք << գեղեցկին, բարուն , վսեմին, լավին աշակերտողների>> սերունդներն ենք և անշեղորեն պիտի շարունակենք մեր նախնիների կանխորոշած ուղին։ Վերոհիշյալ գեղագիտական կատեգորիաների աստիճանական փոխանցումը մատաղ սերնդին պետք է դառնա գրականության ուսուցչի գլխավոր դաստիարակչական նպատակներից մեկը։

Գլուխ 3. Մանկավարժական ախտորոշման տեխնոլոգիան որպես գեղագիտական դաստիարակության արդյունավետ միջոց

Աշակերտների բարոյական և գեղագիտական դաստիարակության վրա ավելի արդյունավետ աշխատելու համար նպատակահարմար է օգտագործել մանկավարժական ախտորոշման տեխնոլոգիան, որը ոչ միայն պատկերացում է տալիս աշակերտի անձի բարոյական և գեղագիտական զարգացման աստիճանի մասին, այլև օգնում է պայմաններ ստեղծել այդ որակների հետագա զարգացման համար: Աշակերտների գեղագիտական որակների զարգացման ախտորոշման ընթացքում ուսուցիչը պետք է իր առջև դնի ընդհանուր և հատուկ նպատակներ: Ընդհանուր նպատակները վերաբերում են երեխայի զարգացման, դաստիարակության ընդհանուր մակարդակի բացահայտմանը: Մասնավոր նպատակները կապված են արժեքային կողմնորոշումների զարգացման մակարդակի, աշակերտների գեղագիտական ճաշակի բացահայտման հետ: Նպատակները ճշտելուց հետո որոշվում են անձի զարգացման չափանիշներն ու ցուցանիշները:

Գեղագիտական զարգացման չափանիշներից կարելի է առանձնացնել.

- գեղագիտական գիտելիքների ամբողջականությունն ու բազմակողմանիությունը
- գեղագիտական հետաքրքրությունները և պահանջմունքները
- արվեստի հետ հաղորդակցվելու պահանջմունքները
- գեղեցիկի հետ շփվելիս գեղագիտական զգացմունքների դրսևորումը
- արվեստի գործի ընկալման խորությունը
- շրջապատող իրականությունը գեղարվեստականի կերպափոխելու ունակությունը և այլն :

Աշակերտի անհատականությունն ուսումնասիրելու գործընթացում ուսուցիչը ընտրում է ախտորոշման տարբեր մեթոդներ, այսինքն՝ երեխային ուսումնասիրելու եղանակներ , որոնցով ուսուցիչը որոշում է աշակերտների գեղագիտական զարգացման մակարդակը : Դրանք քիչ չեն.

- Դիտում
- Զրույց աշակերտի հետ
- Գործունեության արդյունքների վերլուծություն
- Ստեղծագործական և վերլուծական շարադրություններ և այլն

Հետազոտման միջոցով ուսուցիչը պետք է տարբերակի աշակերտների գեղագիտական զարգացման երեք ընդհանրացված մակարդակ՝ **ցածր, միջին և բարձր :**

Գեղագիտական զարգացման ցածր մակարդակը ենթադրում է.

- գեղագիտական ցածր գիտելիքներ
- պատասխանների նկարագրականություն
- դիտարկումների պատահականություն
- մանրամասների զանգվածից արտահայտիչ մանրամասնը առանձնացնելու անկարողություն
- իրականության նկատմամբ սեփական վերաբերմունքը ձևակերպելու անկարողություն
- տարրական վերաբերմունք արվեստի գործերին, շրջապատող իրականությանը, որը աշակերտը բնութագրում է շատ ընդհանուր ցուցանիշներով (լավ կամ վատ, հավանում եմ կամ սիրում եմ) ՝ առանց որևէ նրբերանգների
- արվեստի պրիմիտիվիրատեսական,անմիջական, հայելային ընկալում
- ստեղծագործական երևակայության բացակայություն կամ թերզարգացում
- գեղագիտական զգացմունքների և ճաշակի թերզարգացում
- ընդգծված հակվածություն դեպի սյուժեի ռիթմը, արվեստի գործի արտաքին և ոչ թե բովանդակային հատկանիշները:

Գեղագիտական զարգացման միջին մակարդակը ենթադրում է.

- գեղագիտական արժեքների, որոշակի հասկացությունների տիրապետում
- ոչ այնքան իրադարձությունները նկարագրելու, որքան դրանց մասին տրամաբանելու ցանկությունը

- բավականին կայուն գեղագիտական ճաշակ
- իրականության նկատմամբ որոշակի վերաբերմունքի դրսևորում
- գեղագիտական հետաքրքրությունների և իդեալների կապ ինչպես զանգվածային մշակույթի, այնպես էլ նրա իսկական նվաճումների հետ
- արվեստի ընկալումը՝ հիմնականում որպես մտքերի գրավիչ շարադրանք
- որոշակի սոցիալական խնդիրների զուտ տեսողական ձևակերպում
- հետաքրքրական վերաբերմունք արվեստի ստեղծագործության մեջ արտացոլված խնդրին, բայց ոչ բուն ստեղծագործության գեղարվեստական արժեքներին, հեղինակի ոճին

Գեղագիտական զարգացման բարձր մակարդակը ենթադրում է.

- արվեստի և շրջապատող իրականության ընկալման ամբողջականությունը
- արվեստի բնույթը զգալու ունակությունը
- արվեստագետի տիպիկ ձեռագիրը , նրա արվեստի առանձնահատկությունները մեկ ուրիշ արվեստագետից տարբերելու ունակությունը
- գեղարվեստական ստեղծագործության, իրականության գեղագիտական վերափոխման անհրաժեշտությունը
- բազմակողմանի գեղագիտական հետաքրքրություններ և պահանջմունքներ
- զարգացած գեղագիտական ճաշակ
- ընդգծված անհատականության դրսևորում շահերի և իդեալների սահմանման մեջ

Մանկավարժական այս մեթոդների կիրառման և գեղագիտական մակարդակների այս հստակ դասակարգման արդյունքում ուսուցիչը կարող է ոչ միայն որոշել աշակերտների մտահորիզոնի ընդգրկվածությունը, այլև ընտրել յուրաքանչյուր խմբի համար գեղագիտական մակարդակը բարելավելու ամենահարմար ուղիները։

Եզրակացություն

Այսպիսով, ժամանակակից հայկական դպրոցը պետք է դաստիարակի հայեցի մտածողությամբ բարձրաճաշակ, լայն մտահորիզոնի և խորը հոգու տեր քաղաքացիների: Այդ նպատակին պետք է ուղղված լինեն բոլոր առարկաներ դասընթացները: Սակայն մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության առաջին և գլխավոր պատասխանատուն պետք է լինի գրականության ուսուցիչը, որը պիտի դառնա նրանց գեղագիտական գործունեության կարգավորիչը և ուղղորդողը, գեղագիտական իդեալների , արժեքային համակարգի ձևավորողը և վերահսկողը: Գրականության դասերին աշակերտների հոգում սիրո, բարության և հավատի լույսեր վառելով՝ ուսուցիչը ձգտում է նրան սովորեցնել ապրել բարու և գեղեցիկի օրենքներով : Նա հետևողականորեն ձևավորում է արժեքների համակարգ՝ կապված հայկական և համաշխարհային մշակույթի լավագույն ավանդույթների հետ: Հենց այդ ավանդույթներն են դառնալու ամուր հիմք ապագայի հայ քաղաքացու հոգևոր և գեղագիտական բարձր գիտակցության համար: Դասին պատրաստվելիս գրականության ուսուցիչը պիտի ընտրի այն, ինչ գեղարվեստական առումով ամենակարևորն է, այն նյութը, որը կազդի աշակերտների սրտի, մտքի, նրանց բարոյական զարգացման վրա: Դասը իմաստ ունի, եթե նրա ուսումնասիրության առարկան կյանքն է՝ այնքան թանկ և հետաքրքիր ցանկացած անձի համար: Ստեղծագործության մեջ պատկերվող կյանքը կապելով ՝ աշակերտներին շրջապատող իրականության հետ՝ ուսուցիչը նրանց սովորեցնում է հասկանալ մարդկանց, կատարել բարոյագիտական և գեղագիտական բացահայտումներ: Հենվելով այս բնագավառում մարդկության բազմադարյա փորձի վրա, ինչպես նաև տիրապետելով օրեցօր թարմացող նոր մեթոդներին և տեխնոլոգիաներին՝ հայ ուսուցիչը պետք է անձնվիրաբար աշխատի և կերտի ապագայի արժանավայել սերունդ: Ի վերջո, ինչպես գիտենք, մարդիկ ոչ թե ծնվում, այլ դառնում են այնպիսին, ինչպիսին կան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սահակյան Ռ., << Գեղագիտություն >>, Եր., 2008
2. Աղաբաբյան Ս., <<Երեխաների և անչափահասների գեղագիտական դաստիարակությունը>> , Եր., 1998
3. Մկրտչյան Կ., <<Գեղեցիկի աշխարհում>>, Եր.,1987
4. Նեմենսկի Բ., <<Գեղեցկության իմաստությունը։ Գիրք ուսուցիչների համար>> , Եր.,1987
5. Հակոբյան Ն., << Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը դպրոցում>>, Եր.,1986
6. Բալյան Ա., <<Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը >>, Եր.,1979
7. Մելքումյան Մ., <<Դպրոցականներ գեղագիտական զգացմունքների դաստիարակությունը>>, Եր.,1967
8. Նալչաջյան Ա. ,<<Հոգեբանության հիմունքներ>>, Եր.,1997